

**ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՆՈՐ  
ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ՑԱՆՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝  
ՑԱՆՑԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, ելնելով ցանցային գործունեության միջոցով Մեծահասակների<sup>1</sup> կրթության (այսուհետ՝ ՄԿ) կենտրոնների հետ աշխատանքի արդյունավետության բարձրացման և Հայաստանում ՄԿ պրակտիկայի խթանման ծրագրային նպատակներից, հայտարարում է հետազոտական մրցույթ, որի նպատակն է գնահատել ՄԿ կենտրոնների ստեղծվելիք ցանցի արդյունավետությունը և կիրառելիությունը՝ ցանցային գործունեության համատեքստում:

**Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մասին**

Որպես մեծահասակների կրթության առաջատար մասնագիտական կառույց՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն արդեն 50 տարի է, ինչ պարտավորություն է ստանձնել խթանելու շարունակական կրթությունը գրեթե 40 երկրներում՝ աջակցություն տրամադրելով մեծահասակների կրթություն իրականացնող կառույցների ստեղծմանը և զարգացմանը: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը ֆինանսավորվում է Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության, Գերմանիայի արտաքին գործերի նախարարության, Եվրոպական միության, ինչպես նաև այլ դոնորների կողմից:

**Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի մասին**

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը հիմնվել է 2002թ.-ին՝ դառնալով Հայաստանում մեծահասակների կրթության և ցկյանս ուսումնառության ներդրման և զարգացման առանցքային դերակատար: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակն իր գործունեությունը ծավալում է եռամյա ծրագրերով՝ 3 մակարդակներում.

- Մակրո մակարդակ՝ ՄԿ ոլորտում քաղաքականության և համակարգային փոփոխություններ,
- Մեզո մակարդակ՝ կազմակերպությունների և մասնագետների կարողությունների զարգացում,

---

<sup>1</sup> Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի գործունեության շրջանակներում մեծահասակ են համարվում այն բոլոր անձինք, ովքեր ավարտել են առաջին ֆորմալ կրթությունը:

- Միկրո մակարդակ՝ մեծահասակների կրթության իրականացում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից աջակցություն ստացող ՄԿ կենտրոններում:<sup>2</sup>

### **Մեծահասակների կրթության կենտրոններ, հիմնական դերը և գործառույթները**

Մեծահասակների կրթության կենտրոնը համայնքային կյանքի հիմնարար ինստիտուտներից է և քաղաքացիական կրթության կարևոր երաշխավոր: Մեծահասակների կրթության կենտրոնների նպատակն է նպաստել աղքատության կրճատմանը տարբեր կրթական ծրագրերի (ներառյալ համակարգչային և լեզվի դասընթացներ, հաշվապահություն և ֆինանսական կառավարում, արվեստ ու արհեստներ և այլն) միջոցով և օգնել համայնքի անդամներին դառնալ առավել մրցունակ տեղական շուկայում:

Մեծահասակների կրթության կենտրոնները իրենց հասարակական առաքելությունն իրականացնում են սոցիալական բաղադրիչի միջոցով և շահույթ չեն հետապնդում: Կենտրոնները սովորաբար ուսումը կազմակերպում են անվճար կամ ցածր վճարով, երբեմն սիմվոլիկ անդամավճարներով, որոնք ծածկում են ծախսերի ընդամենը 10%-ը: Մյուս մասը լրացվում է այլ աղբյուրներից՝ տեղական իշխանությունների, սոցիալական ձեռներեցության կամ դոնոր կազմակերպությունների բյուջեների միջոցներից:

### **Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի գործընկեր ՄԿ կենտրոնները**

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Հայաստանյան գրասենյակն այսօր աջակցում է 3 մեծահասակների կրթության կենտրոնների.

- Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն՝ 2014թ.-ից սկսած,
- Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի Սոցիալ-կրթական կենտրոն (ներկայումս «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն- հիմնադրամ)՝ 2007 թ.-ից սկսած,
- ՔՈԱՖ ՄՄԱԲ կենտրոն՝ 2018թ.-ից սկսած:

Մինչ 2021 թ. նախատեսվում է ավելացնել ևս մեկ կենտրոն: Այդ նպատակով, 2018թ. վերջից սկսած համագործակցային հարաբերություններ են հիմնվել Հայաստանի տարբեր համայնքներում գործող մի քանի ՔՀԿ-երի հետ, որոնք համապատասխան փորձառության ունեն մեծահասակների կրթության և ոչ ֆորմալ կրթության բնագավառում: Մշակվել է այդ ՔՀԿ-երի հետ աշխատելու հայեցակարգ, որի նպատակն է դրանցից մեկին ընտրել 2021 թվականին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի լիարժեք ֆինանսավորման համար, իսկ մյուսներին ներգրավել ստեղծվող Մեծահասակների կրթության կենտրոնների ցանցին:

<sup>2</sup> Ավելին տե՛ս [www.dvv-international.am](http://www.dvv-international.am) կայքում:

## **Մեծահասակների կրթության ցանցի ստեղծում**

Համաձայն եռամյա ծրագրի (2019-2021)՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը նախատեսում է հիմնել Հայաստանի մեծահասակների կրթության կենտրոնների ցանց: Այն կծառայի որպես հովանավոր կառույց՝ նպաստելու ցանցի անդամ ՄԿ կենտրոնների նպատակների և շահերի միասնական հարթակի ձևավորմանն ու իրականացմանը:

Ցանցի նախատեսվող հիմնական գործառույթներն են՝

- Ցանցի և իր անդամների միասնական ռազմավարության և ստանդարտների մշակում, որոնք հիմք կծառայեն մեծահասակների կրթության առավել ընդարձակ ռազմավարական ծրագրի ձևավորման համար:
- Օրինակելի կրթական ծրագրերի մշակում՝ աշխատաշուկայի պահանջներին և ժամանակակից աշխարհում կարևորվող հմտություններին համապատասխան:
- Ցանցի անդամների կարողությունների զարգացում:
- Կրթական ծրագրերի իրականացման համար ցանցի անդամներին տեխնիկական և ֆինանսական աջակցության տրամադրում:
- Ոչ ֆորմալ կրթության ոլորտում գործող կայացած կառույցների հետ կապերի հաստատում, փորձի փոխանակում, միասնական ծրագրերի իրականացում:
- Մեծահասակների կրթության քաղաքականության խթանում և ջատագովում՝ ցանցի անդամ կառույցների գործունեությունը որպես հիմք ընդունելով:
- Ցանցում ներգրավված կառույցների գործունեության հանրայնացում:
- Ոչ ֆորմալ կրթության ոլորտում առկա միտումների, քաղաքականությունների և միջազգային լավագույն փորձի վերաբերյալ տեղեկատվության տարածում:
- Մեծահասակների կրթության մասին քաղաքականություն մշակողների, պետական և ոչ պետական կրթական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում:

**Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը ստեղծվող ցանցի արդյունավետությունը մեծացնելու նպատակով նախատեսում է իրականացնել ցանցի արդյունավետության վերլուծություն՝ ցանցային գործունեության ընդհանուր համատեքստում:**

## **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Ելնելով ցանցային գործունեության միջոցով ՄԿ կենտրոնների հետ աշխատանքի արդյունավետության բարձրացման, Հայաստանում ՄԿ պրակտիկայի խթանման ծրագրային նպատակներից՝ սույն հետազոտության ընդհանուր նպատակն է *վերլուծել ՄԿ կենտրոնների ստեղծվելիք ցանցի արդյունավետությունն ու կիրառելիությունը՝ այն դիտարկելով ցանցային գործունեության ընդհանուր արդյունավետության համատեքստում:*

## Հետազոտության կոնկրետ խնդիրներն են պարզել և ներկայացնել, թե.

- Ի՞նչ է ցանցը, ի՞նչ տեսակներ կան, որո՞նք են հիմնական գործառույթները, կառավարման ի՞նչ մեխանիզմներ կան:
- Կառույցների ցանցերի վերաբերյալ ի՞նչ տեսություններ և հաջողված փորձեր կան աշխարհում:
- Որո՞նք են ցանցի կայունությունն ապահովող հիմնական նախադրյալները:
- Ի՞նչ ռիսկեր կարող է ունենալ ցանցը:
- Ցանցային աշխատանքների ինչպիսի՞ փորձեր կան Հայաստանում, ի՞նչ հնարավորություններ և խոչընդոտներ են ունեցել/ունեն
- Կրթության և մասնավորապես ՄԿ բնագավառում առկա փորձի (Մեծահասակների կրթության ասոցացիա, Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգա) վերլուծություն:
- ՄԿ կենտրոնների առաջարկվող ցանցի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և խնդիրները

## Մեթոդներ

Հետազոտությունն իրենից ներկայացնում է որակական ուսումնասիրություն, որը պետք է հիմնվի երկու առանցքային մեթոդի վրա.

- Երկրորդային նյութերի ուսումնասիրություն, վերլուծություն և դասակարգում (desk research),
- Առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ կամ ֆոկուս խմբեր, որոնք առկա իրավիճակով պայմանավորված՝ կարող են իրականացվել առցանց:

## Առանցքային տեղեկատուների առաջարկվող ցանկ

1. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի աջակցությամբ գործող մեծահասակների կրթության կենտրոնների ներկայացուցիչներ
2. Ստեղծվելիք մեծահասակների կրթության ցանցի հավանական անդամ այլ կառույցների ներկայացուցիչներ
3. Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգայի ներկայացուցիչներ (ներկայումս ծավալում է սահմանակ գործունեություն)
4. Մեծահասակների կրթության ասոցացիայի ներկայացուցիչներ (ներկայումս չի գործում)
5. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան և Վրաստանի գրասենյակի ներկայացուցիչներ, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի վրաստանյան գրասենյակի ներքո գործող ՄԿ կենտրոնների ցանցի ներկայացուցիչներ
6. Ոլորտին առնչվող փորձագետներ և այլ անձինք

## Ակնկալվող արդյունքներ

Որպես հետազոտության վերջնարդյունք ակնկալվում է մի փաստաթուղթ, որը բաղկացած կլինի երեք հիմնական մասից: Դրանցից յուրաքանչյուրը ներկայացվելու է որպես առանձին արդյունք, իսկ վերջում այդ բոլոր մասերը միավորվելու են մեկ վերջնական փաստաթղթում: Վերլուծության երեք մասերն են.

- Ցանցերի աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ հիմնվելով միջազգային փորձի վրա
- Հայաստանի ցանցերի փորձը, այդ թվում՝ կրթության և ՄԿ ոլորտներում աշխատանքների մանրամասն վերլուծություն
- Առաջարկներ՝ նոր ստեղծվող ցանցի առավելագույն արդյունավետությունն ապահովելու համար:

Վերլուծության լեզուն կարող է լինել և հայերեն և անգլերեն՝ համապատասխան թարգմանությամբ:

Հետազոտության տևողությունը՝ 20-30 օր:

## Արդյունքների ներկայացման ժամանակացույց, վճարման կարգը

| Ներկայացվող արդյունք   | Օրերի քանակ | Վճարման մասնաբաժինը |
|--|-------------|---------------------|
| 1. Հետազոտության առաջին մասը, որը ընդգրկում է ցանցերի աշխատանքների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվություն և հայաստանյան փորձը  | 8           | 25%                 |
| 2. Հետազոտության երկրորդ մասը, որն ընդգրկում է հայաստանյան փորձի վերլուծությունը, ինչպես նաև առաջարկներ՝ ստեղծվելիք ցանցի առավելագույն արդյունավետությունն ապահովելու համար, ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու խնդիրները | 8           | 25%                 |
| 3. Հետազոտության վերջնական տարբերակը՝ համաձայնեցրած պատվիրատուի առաջարկների հետ  | 10          | 50%                 |

## Ովքեր կարող են դիմել և ինչպես

Հետազոտության մրցույթին կարող են դիմել ինչպես հետազոտողների խմբեր, այնպես էլ անհատ հետազոտողներ/փորձագետներ:

Պահանջվող որակավորումներն են.

- Բարձրագույն կրթություն (սոցիոլոգիայի, մարդաբանության, կառավարման, միջազգային զարգացման կամ հարակից այլ ոլորտներում),

- Առնվազն 5 տարվա հետազոտական փորձ,
- Կազմակերպությունների կառավարման, ցանցային գործունեության կամ հարակից ոլորտների փորձ:

Հետազոտողների խմբերի դեպքում նշված պահանջները պարտադիր են միայն խմբի ղեկավարի համար:

Հետազոտությունն իրականանելու վերաբերյալ հետաքրքրության հայտերը պետք է ուղարկել [info@divv-international.am](mailto:info@divv-international.am) հասցեին (թեմայի դաշտում նշել *Ցանցի հետազոտություն*), մինչև **ս.թ. ապրիլի 10-ը**, ներառելով.

- համառոտ ինքնակենսագրություն (CV),
- նախկինում իրականացրած նմանատիպ հետազոտության հղում,
- մեկ օրվա համար ակնկալվող գումարի չափը (daily rate):

### **Ընտրության կարգը**

Ընտրությունը տեղի կունենա երկու փուլով: Հետաքրքրության հայտ ներկայացրածների ցանկից կկազմվի կարճ ցուցակ՝ հիմնվելով հետազոտություններ իրականացնելու փորձի և մեկ օրվա համար ակնկալվող գումարի չափի վրա: Կարճ ցուցակում ներառվածներին կտրվի լրացուցիչ առաջադրանք: